



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

28 սեպտեմբերի 2017 թվականի N 157-Ա

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերի՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ *Մհեր Եղիազարյանին* 2017 թվականի հոկտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ, տասը օրով գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի N 1009-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կողմից անցկացվող վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար:

2. *Մհեր Եղիազարյանի* վերապատրաստման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ *Անդրանիկ Ասատրյանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2017 թվականի սեպտեմբերի 28
ք. Հրազդան



Կ. ԳՈՒԼՈՅԱՆ